ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/37

ք. Սպիտակ «2» նոյեմբերի 2020թ.

Սպիտակ համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Գագիկ Սահակյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շտիգեն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Շնկյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Սպիտակ համայնքի կարիքների համար արևային ֆոտովոլտային կայանների կառուցման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձևանմուշը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 19 392 000 (տասնինը միլիոն երեք հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «դ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից

մասնհիկ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սպիտակ համայնք	«Շտիգեն» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Երևան, Դ. Անհաղթի 23/6, 6-րդ տարածք
ՀՎՀՀ 06801433	ՀՎՀՀ 01574905
Հ/Հ	Հ/Հ 22041962027000
ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.	«Ակրա-կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ» բանկ
Համայնքի ղեկավար Գ. Սահակյան	Տնօրեն Հ. Ցեկան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«2» նոյեմբերի 2020 թ. կնքված
ՀՀ ԷՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/37 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	09331400/501	Արևային ֆոտովոլտային կայանի կառուցում 10 ԿՎտ հզորության X40.836194 Y44.258778 կոորդինատով շենքի տանիքի վրա	դրամ	3 264 000	3 264 000	1	ք. Սպիտակ	*Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 20.12.2020թ.*
2	09331400/502	Արևային ֆոտովոլտային կայանի կառուցում 60 ԿՎտ հզորության X40.817630 Y44.220620 X40.817581 Y44.220754 X40.817406 Y44.221264 X40.817361 Y44.221425 X40.817785 Y44.220569 կոորդինատներով շենքերի տանիքների վրա	դրամ	16 128 000	16 128 000	1	ք. Սպիտակ	*Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 20.12.2020թ.*

Չափաբաժին 1

- Մրցույթի մասնակից ընկերությունը պետք է լինի արևային վահանակներ արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչ կամ դիստրիբյուտոր

Վահանակի պահանջվող նվազագույն տեխնիկական բնութագրեր

1.1. Էլեկտրական բնութագրեր

1.1.1	Կայանի վահանակների ընդհանուր դրվածքային հզորությունը	Ոչ պակաս, քան 10 ԿՎտ
1.1.2	Վահանակի դրվածքային հզորությունը, Վտ	Ոչ պակաս, քան 450 Վտ
1.1.3	Դրվածքային հզորության դրական շեղումը	0-+5 Վտ
1.1.4	Հոսանքի ուժը, անվանական (Impp)	Ոչ պակաս, քան 10.85
1.1.5	Լարումը, անվանական (Vmpp)	Ոչ պակաս, քան 41.3

1.1.6	Կարճ միացման հոսանքի ուժը (Isc)	Ոչ պակաս, քան 11.28
1.1.7	Բաց շղթայի լարումը (Voc)	Ոչ պակաս, քան 49.1
1.1.8	Վահանակի արդյունավետությունը (%)	Ոչ պակաս, քան 20.5
1.1.9	Աշխատանքային նոմինալ ջերմաստիճանը (NOCT)	Ոչ ավելի, քան 43±2°C
1.1.10	Ջերմաստիճանից կախված լարման փոփոխության գործակիցը	Ոչ ավելի, քան -0.31 %/C
1.1.11	Ջերմաստիճանից կախված հոսանքի ուժի լարման փոփոխության գործակիցը	Ոչ ավելի, քան +0.05 %/°C
1.1.12	Ջերմաստիճանից կախված հզորության փոփոխության գործակիցը	Ոչ ավելի, քան -0.381 %/°C
	1.2. Մեխանիկական բնութագրեր	
1.2.1	Չափսերը	Ոչ ավելի, քան – երկարությունը՝ 2110 մմ, լայնությունը՝ 1045 մմ, խորությունը՝ 42 մմ
1.2.2	Քաշը	Ոչ ավելի, քան 25 կգ
1.2.3	Դիմային պաշտպանիչ ապակու հաստությունը	Ոչ պակաս, քան 3.2 մմ
1.2.4	Շրջանակը	Անոդացված ալյումինից
1.2.5	Մալուխների կտրվածքը	Ոչ պակաս, քան 4 մմ² (IEC)
1.2.6	Միացումների տուփի պաշտպանության աստիճանը	Ոչ պակաս, քան IP 68
	1.3. Աշխատանքային բնութագրեր	
1.3.1	Աշխատանքային ջերմաստիճանի թույլատրելի միջակայք	- 40-ից մինչև + 85°C
1.3.2	80 կմ/ժ արագությամբ հարվածող կարկտի հատիկի թույլատրելի չափը	Ոչ պակաս, քան 25 մմ
1.3.3	Դիմային մակերևույթի կողմից ստատիկ ճնշման թույլատրելի չափը	Ոչ պակաս, քան 5400 Պա
1.3.4	Վահանակների հրդեհաանվտանգության աստիճանը (UL 1703)	Ոչ պակաս, քան Type 4
1.3.5	Համակարգի լարման առավելագույն չափը	Ոչ պակաս, քան 1500 Վ
	1.4. Այլ բնութագրեր	
1.4.1	Վահանակների տիպը	Մոնոբյուրեղային
1.4.2	Վահանակների երաշխիքային ժամկետը	Ոչ պակաս, քան 12 տարի
1.4.3	Արտադրողի կողմից երաշխավորված արտադրողականության ժամկետը	Ոչ պակաս, քան 25 տարի
1.4.4	Վահանակների արտադրողականության նվազման թույլատրելի չափը	Ոչ ավելի, քան 0.7 % ամեն տարվա համար, արդյունքում ոչ ավելի, քան 20 % 25 տարվա ընթացքում
1.4.5	Վահանակների արտադրող ընկերությունը պետք ներառված լինի արտադրողների գլոբալ TIER 1 ցանկում	Այո

- Մրցույթի մասնակից ընկերությունը պետք է լինի արևային վահանակներ արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչ կամ դիստրիբյուտոր
- Մրցույթի մասնակից ընկերությունը պետք է արտադրողի կողմից իրավունք ունենա երաշխիքային ժամկետի ընթացքում փոխակերպիչների վերանորգման և սպասարկման համար

	Փոխակերպիչի պահանջվող նվազագույն տեխնիկական բնութագրեր	
	1. Մուտքային տվյալներ	
1.1	MPP տրեկերների քանակը	Ոչ պակաս, քան 2
1.2	Հաստատուն հոսանքի ուժի թույլատրելի չափը յուրաքանչյուր տրեկերի համար	Ոչ պակաս, քան 12 Ա յուրաքանչյուր տրեկերի համար
1.3	Հաստատուն հոսանքի լարման թույլատրելի միջակայքը	Ոչ պակաս, քան 250 – 940 Վ
1.4	Հաստատուն հոսանքի լարման նոմինալ/ առավելագույն չափը	Ոչ պակաս, քան 660/1050 Վ
1.5	Մուտքային հզորության առավելագույն չափը	Ոչ պակաս, քան 12 Կվտ
	2. Ելքային տվյալներ	
2.1	Ելքային հզորության նոմինալ չափը	Ոչ պակաս, քան 10 ԿՎտ
2.2	Ելքային հոսանքի ուժի նոմինալ չափը	Ոչ պակաս, քան 16 Ա
2.3	Փոփոխական հոսանքի շղթայում միացման սխեմա	3W +N +PE/3W+PE
2.4	Փոփոխական հոսանքի հաճախականությունը	50 Հց ± 2 Հց
2.5	Հարմոնիկ շեղումների չափը	Ոչ ավելի, քան 3 %

2.6	Հզորության գործակից (cos φac,r)	Ոչ պակաս, քան 0.8
	3. Հիմնական տվյալներ	
3.1	Չափսերը (Բ x L x Խ)	Ոչ ավելի, քան 515x335x230 մմ
3.2	Հեռավար մոնիթորինգ կատարելու հնարավորություն	Այո
3.3	Քաշը	Ոչ ավելի, քան 22 kg
3.4	Պաշտպանության աստիճանը	Ոչ պակաս, քան IP 65
3.5	Փոխակերպիչի տիպը	Առանց տրանսֆորմատորների
3.6	Հովացումը	Կոնվեկցիոն
3.7	Տեղադրման տեսակը	Ներքին կամ արտաքին
3.8	Աշխատանքային ջերմաստիճանի թույլատրելի միջակայք	-25-ից մինչև +60 °C
3.9	Սերտիֆիկացում և համապատասխանություն ստանդարտներին	IEC 62109-1, IEC 62109-2, DIN VDE 0126-1-1:2013
3.10	Երաշխիքային ժամկետը	Ոչ պակաս, քան 5 տարի
3.11	Փոխակերպիչների հողանցման իրականացում	Այո
	4. Արդյունավետություն	
4.1	Առավելագույնը	Ոչ պակաս, քան 98 %
4.2	European efficiency (ηEU)	Ոչ պակաս, քան 97.7 %

Չափաբաժին 2

•	Մրցույթի մասնակից ընկերությունը պետք է լինի արևային վահանակներ արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչ կամ դիստրիբյուտոր	
	Վահանակի պահանջվող նվազագույն տեխնիկական բնութագրեր	
	1.5. Էլեկտրական բնութագրեր	
1.1.1	Կայանի վահանակների ընդհանուր դրվածքային հզորությունը	Ոչ պակաս, քան 60 ԿՎտ
1.1.2	Վահանակի դրվածքային հզորությունը, Վտ	Ոչ պակաս, քան 450 Վտ
1.1.3	Դրվածքային հզորության դրական շեղումը	0–+5 Վտ
1.1.4	Հոսանքի ուժը, անվանական (Impp)	Ոչ պակաս, քան 10.85
1.1.5	Լարումը, անվանական (Vmpp)	Ոչ պակաս, քան 41.3
1.1.6	Կարճ միացման հոսանքի ուժը (Isc)	Ոչ պակաս, քան 11.28
1.1.7	Բաց շղթայի լարումը (Voc)	Ոչ պակաս, քան 49.1
1.1.8	Վահանակի արդյունավետությունը (%)	Ոչ պակաս, քան 20.5
1.1.9	Աշխատանքային նոմինալ ջերմաստիճանը (NOCT)	Ոչ ավելի, քան 43±2°C
1.1.10	Ջերմաստիճանից կախված լարման փոփոխության գործակիցը	Ոչ ավելի, քան -0.31 %/C
1.1.11	Ջերմաստիճանից կախված հոսանքի ուժի լարման փոփոխության գործակիցը	Ոչ ավելի, քան +0.05 %/°C
1.1.12	Ջերմաստիճանից կախված հզորության փոփոխության գործակիցը	Ոչ ավելի, քան -0.381 %/°C
	1.6. Մեխանիկական բնութագրեր	
1.2.1	Չափսերը	Ոչ ավելի, քան – երկարությունը՝ 2110 մմ, լայնությունը՝ 1045 մմ, խորությունը՝ 42 մմ
1.2.2	Քաշը	Ոչ ավելի, քան 25 կգ
1.2.3	Դիմային պաշտպանիչ ապակու հաստությունը	Ոչ պակաս, քան 3.2 մմ
1.2.4	Շրջանակը	Անոդացված ալյումինից
1.2.5	Մալուխների կտրվածքը	Ոչ պակաս, քան 4 մմ² (IEC)
1.2.6	Միացումների տուփի պաշտպանության աստիճանը	Ոչ պակաս, քան IP 68
	1.7. Աշխատանքային բնութագրեր	
1.3.1	Աշխատանքային ջերմաստիճանի թույլատրելի միջակայք	- 40-ից մինչև + 85°C
1.3.2	80 կմ/ժ արագությամբ հարվածող կարկտի հատիկի թույլատրելի չափը	Ոչ պակաս, քան 25 մմ
1.3.3	Դիմային մակերևույթի կողմից ստատիկ ճնշման թույլատրելի չափը	Ոչ պակաս, քան 5400 Պա
1.3.4	Վահանակների հրդեհաանվտանգության աստիճանը (UL 1703)	Ոչ պակաս, քան Type 4
1.3.5	Համակարգի լարման առավելագույն չափը	Ոչ պակաս, քան 1500 Վ
	1.8. Այլ բնութագրեր	
1.4.1	Վահանակների տիպը	Մոնոբյուրեղային
1.4.2	Վահանակների երաշխիքային ժամկետը	Ոչ պակաս, քան 12 տարի

1.4.3	Արտադրողի կողմից երաշխավորված արտադրողականության ժամկետը	Ոչ պակաս, քան 25 տարի
1.4.4	Վահանակների արտադրողականության նվազման թույլատրելի չափը	Ոչ ավելի, քան 0.7 % ամեն տարվա համար, արդյունքում ոչ ավելի, քան 20 % 25 տարվա ընթացքում
1.4.5	Վահանակների արտադրող ընկերությունը պետք ներառված լինի արտադրողների գլոբալ TIER 1 ցանկում	Այո

- Մրցույթի մասնակից ընկերությունը պետք է լինի արևային վահանակներ արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչ կամ դիստրիբյուտոր
- Մրցույթի մասնակից ընկերությունը պետք է արտադրողի կողմից իրավունք ունենա երաշխիքային ժամկետի ընթացքում փոխակերպիչների վերանորգման և սպասարկման համար

Փոխակերպիչի պահանջվող նվազագույն տեխնիկական բնութագրեր

	1. Մուտքային տվյալներ	
1.1	MPP տրեկերների քանակը	Ոչ պակաս, քան 6
1.2	Հաստատուն հոսանքի ուժի թույլատրելի չափը յուրաքանչյուր տրեկերի համար	Ոչ պակաս, քան 26 Ա յուրաքանչյուր տրեկերի համար
1.3	Հաստատուն հոսանքի լարման թույլատրելի միջակայքը	Ոչ պակաս, քան 250 – 940 Վ
1.4	Հաստատուն հոսանքի լարման նոմինալ/ առավելագույն չափը	Ոչ պակաս, քան 610/990 Վ
1.5	Մուտքային հզորության առավելագույն չափը	Ոչ պակաս, քան 66 Կվտ
	2. Ելքային տվյալներ	
2.1	Ելքային հզորության նոմինալ չափը	Ոչ պակաս, քան 60 ԿՎտ
2.2	Ելքային հզորության առավելագույն չափը	Ոչ պակաս, քան 64 ԿՎտ
2.3	Ելքային հոսանքի ուժի գումարային նոմինալ չափը	Ոչ պակաս, քան 87 A
	Ելքային հոսանքի ուժի գումարային առավելագույն չափը	Ոչ պակաս, քան 95 A
2.4	Փոփոխական հոսանքի շղթայում միացման սխեմա	3W +N +PE/3W+PE
2.5	Փոփոխական հոսանքի հաճախականությունը	50 Հց ± 5 Հց
2.6	Հարմոնիկ շեղումների չափը	Ոչ ավելի, քան 3 %
2.7	Հզորության գործակից (cos φac.r)	Ոչ պակաս, քան 0.8
	3. Հիմնական տվյալներ	
3.1	Չափսերը (Բ x Լ x Խ)	Ոչ ավելի, քան 960x1280x270 մմ
3.2	Աղմուկի մակարդակը	Ոչ ավելի, քան 40 դԲ
3.3	Հեռավար մոնիթորինգ կատարելու հնարավորություն	Այո
3.4	Քաշը	Ոչ ավելի, քան 125 kg
3.5	Պաշտպանության աստիճանը	Ոչ պակաս, քան IP 65
3.6	Փոխակերպիչի տիպը	Առանց տրանսֆորմատորների
3.7	Հովացումը	Կոնվեկցիոն
3.8	Տեղադրման տեսակը	Ներքին կամ արտաքին
3.9	Աշխատանքային ջերմաստիճանի թույլատրելի միջակայք	-25-ից մինչև +60 °C
3.10	Սերտիֆիկացում և համապատասխանություն ստանդարտներին	IEC 62109-1, IEC 62109-2, DIN VDE 0126-1-1:2013
3.11	Երաշխիքային ժամկետը	Ոչ պակաս, քան 5 տարի
3.12	Փոխակերպիչների հողանցման իրականացում	Այո
	4. Արդյունավետություն	
4.1	Առավելագույնը	Ոչ պակաս, քան 98.3 %
4.2	European efficiency (ηEU)	Ոչ պակաս, քան 98 %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ 06801433
Հ/Հ

ԿԱՏԱՐՈՂ
«Շտիգեն» ՍՊԸ
Ք. Երևան, Դ. Անհաղթի 23/6, 6-րդ տարածք
ՀՎՀՀ 01574905
Հ/Հ 220419620327000

ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.

Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

(ստորագրություն)

Կ.Տ.

«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ» բանկ

Տնօրեն՝ Հ. Շեկոյան

(ստորագրություն)

Կ.Տ.